Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 1892 ԹԻՒ 20

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Խրիմեան Հայրիկի Զարին կողմանէ կաթողիկոսանուանման լուրն ռումբի մի պէս իյնալով Բ. Դրան գլխին՝ թուլցուցած է բռնաւորաց թեւերն։ Նոյն լուր թափ տուած է հայ թեւերուն ընդ հանուր։

Կեցցէ՛ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, վեհ. կաթողիկոս ամենայն Հայոց։

Դուռն, խորամանկ սեփեստոս, Հայերն հանդարտ պահելու և եւրոպեան ուշադրութիւնն հայկական յուզմանց վերայ չդարձնելու նպատակաւ քննիչ յանձնախումբ մի կը կարդէ գաւառներն երթալու։

Հնացեա՞լ հնարք, որոյ պատիր ազդեցութիւնն շատոնց սպառած է Հայոց համար։

—Համալսարանական ոմն կը գրէ մեզ շնորհաւորելով Խրիմեան Հայրիկի կենսագրութեան համար և յայտնելով իւր անհուն ուրախութիւն՝ կ'ըսէ «այդ գրչաւ և ոգւով պատմէ մեզի այդպիսի ուրիշ Հայերու ալ կեանքը, կ'ուզենք մենք ալ ճանչնալ այդ Հայերը ինչպէս դու կը ճանչնաս։ ...»

ԱՌ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Ահա երկու տարի կը լինի յորմէ հետէ սկսած եմ «Հայք»ն հրատարակել։ Եթէ աննման այլ ոչ սակաւ թերթերու «Հայք» կրցած է այսքան շարունակել և շարունակել անընդհատ, այդ հնար եղած է այնու զի ծախուց գրեթէ կէսն անձնական քսակէս վճարած եմ։

Գոյացած բացն վաղուց անցած լինելով տարողութեանս ձգտեալ չափերն, ետիպուած եմ, խորին ցաւ ի սիրտ, անոր հրատարակութեան վախճան տալ ի մօտոյ, այսինքն չորս թիւ եւս հրատարակելէ յետոյ։

Ըստ Պղատոնի արդարն այն մարդն է որ անարդարներուն պատիժն կը կրէ։

Համալսարանական մի — բառին եւրոպեան իմաստովն գիտուն երիտասարդ — որում խոստովանած էի դժնդակ հարկն, 'ւը գրէ ինձ քաջալերական ազնիւ և յոյժ շողմիչ նամակ մի Հոկտ. 2 թուականաւ, յորմէ կ'առնում հետեւեալ տողերն։—

«Հայքի ի մօտոյ դադարման հարկադրումն սարսուռ ազդեց ինձ ...։ Վա՜յ հայութեան, վա՜յ հայ երիտասարդութեան, հազար վայ մեր բարեկամ մեծատանց։ ... Հայ դատի բերան մը, առաջնորդ գործիչ մը, տիպար հայրենասէր մը պիտի պակսի ի մեզ։ Այս տողեր լոկ իմ զգացմանց պատկեր չեն. հազարաւոր աչքեր քո ընթացք կը դիտեն և կը զմայլին։ «Հայք» օր քան զօր կ'ազնուանայ։ Հայն և Հայաստան պէտք ունին «Հայքին,» այո՛, պէտք ունին քո ազնիւ սրտիդ, վառ ըզգացմանցդ, և դիւթիչ գրչիդ. լե՛ր մեզ առաջնորդ, քաջալերուէ և յառաջ խաղա ...։»

Ազնիւ և հայրենասէր ոգիէ բխեալ խօսքեր են դոքա, բայց ես յոյժ հեռի եմ այդպիսի ներբողի արժանի լինելէ։ Ամենեւին չեմ կարծեր և չեմ ջանար կարծել տալ թէ «Հայք» է կատարեալ թերթ մի, ճիշդ որպիսի պէտք էր մեր գաղթական Հայութեան և մեր դժուար և փափուկ խնդրոյ համար։ Ընդհակառակն, կը յայտարարեմ թէ չատ աւելի կարող ոմն պարտէր հրատարկել հայերէն ազատական թերթ մի յարտասահմանի։ Եթէ երբեմն կոչումներ ըրի ձեռնհաս դատողաց նամակներէն, այդ անզգամութիւն յակամայից յանձն առի ցուցնելու համար հասարակութեան թէ «Հայք» յառաջդիմութիւն մի կը նկատուի ազատական հայ Մամլոյ մէջ։

Վերջերս ջանացի հայրենասիրաց խումբ մի համոզել որ 1893ի սկիզբէն լաւագոյն յաջորդ մի տայ «Հայքին», բայց չյաջողեցայ. Ոչ ցաւով այլ ուրախութեամբ պիտի դադրեցուներ «Հայք»ն եթէ լաւագոյն թերթ մի երևան եկած լինէր, և նոր յառաջդիմութիւն մի իրանայր մեր մէջ։

Եւ եթէ կը դադրեցուներ, պատճառն այն է թէ անկարելի է շարունակել ներկայ նիւթական պայմանաց մէջ։ 1891ին իբր 300 բաժնեգին մուտ եղաւ, 1892ին՝ 180 միայն, նոյնպէս և նուիրատուութիւնք նուազեցան։ Այսպէս, հակառակ իմ չարաչար աշխատանաց և ջանից, թերթս առաւել քան անցեալ տարի կաբօտ դտնուեցաւ նպաստի, զոր ժողովրդեան հասկացող մասն չկրցաւ ընձեռել.

Վերջապէս եթէ «Հայք»ն չկրցաւ ինքն իր ծախքերն գոցելու չափ բաժնեգին կամ նպաստ ընդունիլ, այդ կը նշանակէ թէ թերթն, հակառակ ամենայն երևութիցն, միջավայրին չէ յարմարած, թէ Հայ Գաղթական Աշխարհի պիտոյից կամ կրթութեան վիճակին չպատասխաներ։

Բայց այդ անյաջողութեան դէմ ունիմ այն մխիթարութիւն թէ «Հայք» ձևով, խորհրդով և ոգւով ըզգալի յառաջդիմութիւն մ'էր արտասահմանի Հայ ազատական մամլոյ մէջ։ Ուստի և չեմ ցաւիր ժամանակի և դրամի այն զոհաբերութեան համար զոր ըրի այս երկու տարիներս—զոհաբերութիւն զոր իբրև անխոհեմ և չափազանց դսրովեցին բարեկամքս. Բայց երբ այնքանիք կ'ընեն նուազ քան կարեն, մաղթենք որ դանուին միշտ բացառութիւնք ալ որք ընեն առաւել քան իրենց բաժին։

Մ. Ս. Գ.

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խրիմեան Հայրիկ, Կաթողիկոս Ամենայն Հայոց. — Առ Հայ Ժողովուրդն. — Հայ Հայրենասէրք և Հայ Հանճարք. — Մասնենախօսական. Ուղեւորութիւն ի Լեառն Արարատ. — Նամակ Կ. Պոլսէն. — Նամակ Խարբերդէն. — Դարմանն Հայաստանի. — Այլ և Այլք·

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՔ
ԵՒ
ՀԱՅ ՀԱՆՃԱՐՔ

Ա.

ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՀԱԳԻՆ ՈՅԺՆ

Անցեալ դարուց մէջ հայկական շարժմանց շարժառիթն կրօնական և եկեղեցասիրական էր յաւէտ. խակապէս հայրենասիրական դարն նոր եկած հասած է Հայոց համար։

Մինչև 30—40 տարի առաջ հայրենասիրութիւնն կրթութեամբ և ոգւով բարձր կեցող բանաստեղծից և եկեղեցականաց մասնաւոր շնորհն էր, այլ աստիճանաբար կարգէ ի կարգ փոխանցուելով խմորել սկսած է ժողովրդային ստորնագոյն խաւերն անգամ։ Խրիմեան, Նալբանդեան, Քամառ Քաթիպա, Պէշիկթաշլեան և նըմանիք էին երբեմն հայրենասէր, այժմ քաղաքացի վաճառականն ու գիւղացի մշակն, ունեւորն ու չքաւորն, ուսեալն և ոչն, հուժկու երիտասարդն և դողդոջ ծերունին, դպրոցական մանուկն և փափուկ օրիորդն հայրենասէր են կամ կը լինին։

Իրողութիւն կը դառնայ այժմ ինչ որ բանաստեղծի երեւակայութիւն էր 10 տարի առաջ. բանն մարմին կը լինի. յիրաւի «անբարբառ մանուկն իւր անզօր թեւերով զազատութիւն կը գրկէ, և նախկին խօսքն զոր կ'ըսէ չէ հայր կամ մայր կամ այլ ինչ, այլ ազատութիւն դուրս կը թռի իւր մանկական բերանից»։ Հայ աղջիկն կ'ըծայէ իւր եղբօր «զդրօշն զոր իւր ձեռքով գործած է,» և օրիորդն «զինուոր կ'երթայ Հայաստան»։

Հայրենասիրութիւնն իբրև նոր ձեւ հայ հոգւոյ բորբոքման՝ ընդունակ է սարսափելի զօրութիւն լինելու, և պիտի լինի։

Հայ հայրենասիրութիւնն մանուկ է դեռ, սակայն նորա դիւրագայթ քայլից տակ կը սարսի օսմանեան պետութիւնն ահագին։

Հայե՛ր, ծագած է հայրենասիրութեան արեւն Հայ Աշխարհի վերայ, և լեռներն ու բլուրներն լուսազարդելէ յետոյ հետզհետէ դաշտերն ու խոր ձորերն ալ կը սփռէ իւր ջերմ ճառագայթներ. կը հալին պաղք, կը լուծուին սառնամանիք, կը հոսին ջուրք, և հեղեղք հեղեղաց միացած կը սպառնան խորտակել ամեն թումբ և ընթանալ ահեղասաստ։

Ապշած է Թուրք բռնապետութիւնն, պիտի ապշի աշխարհս եւս քիչ ժամանակէն հանդիսատես լինելով հայ զօրութեանց հիանալի երեւութից։

Բ

ՈՒԺԻ ԵՒ ՀԱՆՃԱՐԻ ՄԻԱՑՈՒՄՆ

Բաւական չէ սակայն որ Թուրքն սարսափով և Եւրոպա զարմանօք դիտեն օր մի մեր հայրենասիրական բուռն արտայայտութիւններ։ Հայրենասիրութիւնն ինքնին հերիք չէ ժողովուրդն փրկելու կամ հայրենիքն վերաշինելու։ Ո՛չ բնական և ո՛չ բարոյական աշխարհի մէջ կայ զօրութիւն մի որ ինքն իրեն չինիչ հանդիսանայ։ Հեղեղն հզօր է, բայց կը քայքայէ. շանթն հզօր է, բայց կ'այրէ։ Հայրենասիրութիւնն ալ հզօր է բայց կրնայ կորուսանել ժողովուրդ մի եթէ չարաչար գործածուի։

Որպէս զի յօգուտ գործածել կարենամք զօրութիւններն, պարտիմք ճանաչել այն օրէնքներ որոց հըպատակ են զօրութիւնք, և պարտիմք նաև ունենալ օգտակար նպատակ։ Այդ պայմանաւ է որ ելեքտրականութեան նման մահաբոյր զօրութիւն մի կը ծառայեցունեմք հաղորդակցութեան, լուսաւորութեան և բժշկութեան նպատակաց։

Հայ ժողովուրդն ալ այժմ հայրենասիրական ելեքտրականութեամբ լեցուն է. մեղմ հպումներն ալ կը բաւեն կայծ արձակել տալու. և այս սխրալի բայց ահաւոր վիճակ մ'է։ Ազատութեան հասնելու էական պայման մի իրացած է, բայց կրնայ չարաչար վրիպիլ նպատակէն եթէ չգործածուի ըստ օրինի։

Ահագին խնդիր մ'է թէ ի՛նչպէս կարելի է պատշաճ չափով և պատեհ պահուն հանել ժողովրդէն համբարեալ զօրութիւնն և ծառայեցունել զայն յազատութիւն հայրենեաց։

Կա՞ն արդեօք ազգին մէջ այնպիսի գլուխներ որք նորա այս ճգնաժամուն մէջ կարող լինին նորա ոյժերն հոսեցունել դէպ ի սուրբ նպատակն ապահովապէս։

Կա՛ն, այո՛, աներկբայ կան այդպիսի գլուխներ այն ազգին մէջ որ դեռ նոր հանած է ու կը հանէ իւր ծոցէն Մելիքոֆներ, Տէր-Ղուկասոֆներ ու Լազարէֆներ, Նուպարներ, Գազազեաններ, Օտեաններ ու Մելքոնխաններ.— զինուորական ու պետական այնպիսի մեծ մարդիկ որք մեծ ազգաց մէջ իսկ հազուագիւտ են։

Այո՛, ոյժ կայ յազգին, կայ նաև հանճար բաւական և աւելի քան բաւական, սակայն ոյժն միացած չէ հանճարին. տասն բիւր հայ բազուկք պատրաստ են, բայց չի՛ք գլուխ զայնս գործածելու. ահեղ գործի կայ, բայց ընտիր գործիչ՝ ոչ։ — Կուսակցութիւն մ'ունիմք բաւական զօրաւոր, որ սակայն միակողմանի է և սխալ սկզբանց կը ծառայէ. ունիմք ուրիշ կուսակցութիւն մի եւս որ անզօր, անկերպարան և անսկզբունք է։

Գ

ՍԽԱԼ ՍԿԶԲԱՆՑ ԾԱՌԱՅՈՂ ԳՈՐԾԻՉՔ

Հայաստանի ժողովուրդն չէ՝ իբրև ոչխարաց հօտ մի՝ առանց անցելոյն հետ սերտ կապակցութեան, առանց պատմութեան։ Նա չորս հազար տարիէ ի վեր ազգային շրջափոխութեան մի զանազան աստիճաններէն անցած է. այլ և այլ քաղաքակրթութեանց՝ կրօնից և հաստատութեանց ազդեցութիւններն կրած և ընտանեկան ու եկեղեցական իւրուրոյն դրութեան տակ ստացած և զարգացուցած է հայկական եղանակ մի զգալու, խորհելու և կամելու զոր ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԻ կը կոչեմք կամ հայ բնաւորութիւն։

Ով որ յօժար է անձնուէր գործիչի դեր ստանձնելու հայ ազգին մէջ, պարտի ոչ միայն ուսեալ և ազնիւ լինիլ այլ և գերազանցապէս Հայ, և խորապէս ճանաչել հայ հոգին։ Քանզի գուշակելու համար թէ ինչ լինելու ընդունակ է հայն՝ պարտ է ճանաչել թէ նա ինչ կրցած է լինիլ յանցելումն և ինչ է այսօր։

Յառաջդիմութեան այն գիծ որում պիտի հետեւի Հայն, չէ գերմանական, փռանսական կամ ուրիշ, այլ այն հայկական գիծ՝ որոյ ծայրն անցելոյն խաւարին մէջ աներեւոյթ կը լինի։ Եթէ ազգն դուրս հանեմք իւրուրոյն զարգացման շաւղէն, կը մոլորի ու կը կորնչի։

Մեր սկզբունք պէտք է լինի զՀայն ընել լաւագոյն հայ, ոչ թէ Զուիցերիացի, Փռանսացի, Գերմանացի, Անգղիացի կամ այլ լաւագոյն ազգի նման։

Ինչ հաստատութիւն կամ կարգ կրօնային, ընկերային կամ քաղաքական որ կամիմք ընծայել Հայուն,

պէտք է որ զայնս օտարէն չառնումք այլ որպէս թէ բիւեցուներմք բուն հայ հոգիէն եթէ կ'ուզեմք որ մնան և զարգացման ճշմարիտ օժանդակներ լինին։

Բայց մեր գործիչներու մէջ կայ դաս մի որ մտանագիտի անձուկ տրամաբանութեան թակարթն ինկած՝ կ'ըսէ —Սոսիալիսմն ժողովրդոց ճշմարիտ բարօրութիւնն ապահովելու դրութիւնն է (ըստ համալսարանական հայեցողութեանց), ուրեմն պէտք է զՀայաստան ազատել Թրքի լծէն և ընել զայն ընկերվարական։

Ոմանք ալ մեղմելով առաջարկութիւնն կը մտածեն թէ Հանրապետութիւնն է Հայաստանի ընծայուելու դրութիւնն, քանզի Միացեալ Նահանգք, Ֆռանսա և Զուիցերիա իբրեւ հանրապետական ազգք կը բարգաւաճին։

Որպէս թէ հանրապետութեան մէջ բարգաւաճող ազգեր հանրապետութեան շնորհի՞ւ բարգաւաճէին։

Թի՛ւր տրամաբանութիւն։

Հարաւային Ամերիգայի ժողովրդոց գործիչք եւս Միացեալ Նահանգաց օրինակին նայելով և բարի նախանձով հիմնեցին Հանրապետութիւններ, որք Միացեալ Նահանգաց պէս ծաղկելու փոխան՝ բազմակրկնակ յեղափոխութեանց, անիշխանութեան և տիդդադորութեան թատր դարձած են։

Գորտն ալ եղան նման լինիլ ջանալով պայթեցաւ, կ'ըսէ Լաֆոնդէն։

Ա՛յլ Ախալ։ Այդ գործիչք եռանդնեալ են ընկերվարական գաղափարք, և որքան հնար է մեղ դատել իրենց բերանն եղող թերթէն, Հայոց Պատմութիւն և Հայաստան դոցա չեն ազգեր բնաւ, կամ չեն ազգեր բաւական, քանզի բնաւ հայ անցեալ կամ ժամանակակից մեծ արանց վերայ չեն խօսիր ընթերցողաց, և կաթողիկոսական խնդիր, կրօն, եկեղեցի հնացեալ, ոսնեալ, անպիտանացեալ բաներ կը թուին յաչս դոցա։

Թող չկարծեն ոակայն թէ Հայաստանի ժողովրդեան հայրենասիրական այժմու բորբոքման բուն պատճառն իրենք են. ժողովուրդն ո՛չ մայր հայրենեաց մէջ ո՛չ յարտասահմանի՝ ներշնչեալ չէ ընկերվարական գաղափարներէ զորս ոչ կը հասկնայ և ոչ կը յարգէ. նա ոգեւորեալ է բուն ազգային զգացմամբք։

Մասիս, Էջմիածին, Երասխ, Եփրատ, հայ վանքեր, հայ հին մատենագրութիւն և պատմութիւն, մինչև անգամ հայկական աւերակներն ազբիւր են խորհրդաւոր զօրութեան և կենաց Հայուն։ Հայ ազգութիւնն կը կենայ այդ հնութեան առ երևոյթս խարխուլ բայց իրօք խորանիստ և ամուր հիմանց վերայ, և եթէ ոևէ նոր գաղափար կամ ցնորք դնել ուզեմք այդ հիմանց տեղ, Հայութիւնն կը կործանի, կը դառնայ յանէութիւն։ Բարեբաղդաբար անհնար է զայդ ընել։

Նաև եթէ լաւ նային գործիչք աշխարհի պատմութեան, պիտի տեսնեն թէ ժողովուրդք ոգեւորեալ են և անձնուէր եղած ոչ գաղափարներ այլ մարդեր պաշտելով, ո՛չ վերացեալ այլ մարդացեալ գաղափարներ. և այդ այդպէս պիտի լինի միշտ։

Կրթուած մարդ մի ընդունակ է գաղափարով զօրանալու, բայց ամբոխն մա՛րդ կ'ուզէ սքանչանալու, սիրելու և հետեւելու համար։

Ցոյց տուր ուրեմն ժողովրդիդ մեծ մարդեր յանցելումն և զարդիս նորա ծոցէն ծնած, և նա կը գործէ հրաշագործ ուժով։

Դ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս համառօտ բացատրութեամբ յուսամք քիչ մի աւելի պարզած եղանք թէ ինչու մեր այժմու լաւագոյն կուսակցութիւնն միակողմանի, թերի, անձուկ կը հռչակեմք, «չափազանց յեղափոխական և հաղիւ բաւական հայ» կը համարիմք։

Բնաւ չեմք մեղադրեր ոակայն ժողովուրդն որ կը հետեւի այդ կուսակցութեան. ընդհակառակն շատ բնական կը գտնեմք որ նա համակրի այն կուսակցութեան որ իրեն արժանաւոր մրցակից մի չունի, և որ այնքան ուժի և կազմակերպութեան նշաններ տուած է։

Բայց կը բաղձամք որ մեր մշակեալ երիտասարդք առանց վերապահութեան անձնատուր չլինին այդ կուսակցութեան, այլ ջանան գինքեանս և իրենց ազդեցութեան տակ գտնուող ամբոխն զգուշացնել ընկերվարական արտառոց գաղափարներէ որք կրնան օր մի հայ հողոյ վերայ սոսկալի արդիւնք յառաջ բերել։

Գոհութեամբ դիտած եմք արդէն թէ ուսեալ երիտասարդաց և նոյն իսկ անուսներու մեծ մասն կը համակրին յիշեալ կուսակցութեան՝ ինկատի առնլով նոցա անմիջական նպատակն կամ Թրքական բռնապետութեան լծէն ազատելու միջոցներն. իսկ թէ Հայաստանն Թրքական լծէն ազատելէ յետոյ կրնա՞ մնալ Թրքական վեհապետութեան ներքև թէ պարտի կրել ռուսական, անգղիական կամ այլ թեւարկութիւն, կամ թէ պէ՞տք է լինի բոլորովին անկախ և ընկերվարական կամ հանրապետական— այդ ամենուն մասին տարբեր կարծիքներ ունին և որոշ բան մտածելու չեն ջանար առ այժմ։

Նաև կը յուսամք թէ յաչս հայրենասէր երիտասարդութեան աւելի պարզած եղանք թէ ինչու կը պահանջեմք խորհող մեծ գլուխներէ կազմեալ կեդրոնական յանձնախումբ մի։ Ընդունելով թէ ընդ խնդրով գլխաւորող կուսակցութիւնն ունի իւր լաւ կողմն, կը բաղձամք որ ուրիշ գործիչներու հետ միանալով ամբողջանայ, կատարելագործուի, չափաւորի, ուղղուի, զգօնանայ։

Այդ կուսակցութեան պետերն ինքնին պարտէին փափաքիլ այսպիսի միութեան մի, և խնդրել զայն, եթէ են արդարև խղճամիտ և կը զգան թէ որպիսի ահաւոր պատասխանատուութիւն կը ծանրանայ իրենց վերայ։ Ի՞նչ, կը կարծե՞ն թէ իրենցմէ դուրս հայ բարձր հանճար, քաղաքագիտութիւն, մտքի ոյժ չկայ։

Մեծ կեդրոն մի կազմակերպելու հարկն զգացող բոլոր զգօն հայրենակիցք այն հաստատ համոզումն ունին թէ հայ դատն ապահովագոյն կերպիւ կրնայ յառաջ մղուիլ եթէ գոնէ հինգն հայ տաղանդաւոր և փորձառու գլուխներէն ի մի կեդրոն գան և վարեն ազգային շարժումն։

Եղան նաև այս նպատակաւ իրենց քուէ Նիւ Եորքի Հայ Հայրենասիրաց Ցանձնախմբին յղողներ։ Ահաւասիկ Կալկաթայէն ստորագրուած և յղուած քուէարկութիւնը, իբրև օրինակ, որ կը կրէ 25 Օգոստոս 1891 թուական.—

Նուպար Փաշա,
Մելքոն Խան,
Մինաս Ջերազ,
. . . . . .
Մի Ռուսահայ, Հնչակեան կուսակցութենէն։

Կան ուրիշ հինգ անուններ ևս, զորս զանց կը ընեմք յիշել և որոց մի քանիներու մասին հանրային կարծիքն հաւանօրէն փոփոխութիւններ կրած է այդ թուականէն ի վեր։

Բայց ի վերոյ յիշուած չորս անուններն կը ցուցնեն թէ մեր խոհուն հայրենակիցք որպէս կ'ըմբռնեն կեդրոնի մի կազմակերպութեան պէտքն ու հանգամանքն։

Եւ մեք պարզապէս կ'ըսեմք թէ մեր հայրենասէր երիտասարդք չարաչար կը սխալին Նուպար Փաշայի նըման Հայ բարձր հանճարներէ օգուտ քաղել չջանալով։

Միթէ այդպիսի բարձրադիր Հայեր կը զիջանի՞ն կամ ի դէպ կը համարի՞ն ազգային խնդրոյն խառնուելու, պիտի հարցնեն շատեր։

Կը պատասխանեմք —փորձեցի՞նք միթէ։ Եւ ինչո՞ւ չհամարիմք հաւանական թէ այդպիսի Հայեր իրենց փառք ու պարծանք վարկանին իրենց ազգին այս մեծ և

պատմական ժամանակին մէջ փրկութեան առաջնորդել ժողովուրդն իրենց բոլոր փորձառութեան և տաղանդի զօրութեամբ։

Բայց եթէ ոմն կամ ոմանք մերժեն, այլ ոմն կամ ոմանք կ'ընդունին այդ պաշտօն. քանզի, փառք Աստուծոյ, Հայ ազգին մէջ այսօր բաւական թուով անձեր կան բարձր տաղանդի և խորին մշակութեան տէր։

Հայրե՛նասէրք,

Բարձր բռնենք մեր դրօշ, ամ քան զամ աւելի բարձր. այս տարի սիրենք աւելի, տանք աւելի և պահանջենք աւելի՛ քան անցեալ տարի։

Ներկայի արժանաւոր գործիչներն, և միա՛յն անոնք քաջալերենք, բայց միանգամայն աշխատինք զայնս ուղղելու անուղղակի ազդեցութեամբք գոնէ՝ մինչև որ ապահովագոյն կեդրոն մի կազմուի ազգին բարձր քաղաքագէտ տաղանդներով։ Ջանանք կազմակերպութեան այդ մեծ օրն փութացունել ամենայն հնարիւք, քանզի կազմակերպեալ ուժերն են միայն որ կրնան յօգուտ և ի փրկութիւն հայրենեաց ծառայել։

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԼԵՌՆ ԱՐԱՐԱՏ

Ի ԺԻՒԼ ԼԸՔԼԷՌՔԷ

Նախագահ Պելճիքական Աշխարհագրական Ընկերակցութեան

328 ութածալ երես, Փարիզ, գրատուն Փլոն, 1892

Ֆռանսերէն լեզուաւ գրուած այս գիրք, որքան գիտեմք, լաւագոյն գիրքն է Հայոց վերայ օտար լեզուաւ վերջին ժամանակներու հրատարակուածներուն մէջ։

Հեղինակն խորին համակրանօք կը խօսի մեր ցեղին վերայ, և զարմանալի մատենագրական ճարտարութեամբ յերիւրած է մատենին այլևայլ նիւթոց և գլխոց յաջորդութիւնն, այնպէս որ զքեզ նախ կը տանի ի Թիֆլիս և յԵրեւան, կառաջնորդէ Մասիս լեռն, վայելել կուտայ քրդային կաթ ու քրդային խորդախութիւններ, Մասեաց վեհափառ տեսիլն հեռուէն և մօտէն, երեկոյին, գիշերով և առաւօտուն կանուխ դիտել կուտայ, կը հանէ զքեզ ի բարձունս, 4760 մեթր վեր, կամ գագաթէն միայն 440 մեթր ցած, ուստից փոքր Մասիս գաճաճ մի կը թուի և ուրիշ ամեն լեռներու կոյսերն իբրև պնդացած ալիք, կ'իջեցունէ վար, կը տանի զքեզ յԷջմիածին, ուր քրիստոնեայ աշխարհի քան զամենայն հին հաստատութեանց մին կը տեսնես, հնութեան սրբազոյդ յիշատակաց մէջ կ'ընկղմիս, կը լսես Ս. Գրիգոր Լուսաւորչի և կաթողիկոսաց վերայ, և ապա անզգալապէս պատրաստուած կը գտնես զքեզ լսելու մեծ հետաքրքրութեամբ վերջին երեք գլուխներն, որք նուիրուած են Հայաստան աշխարհի և Հայկական Խնդրոյն։

Գիրքն ընթերցողօտարականն Մասիս լեռան վերայ ուղեւորութեան մի զբօսալի պատմութիւնն կարդալով հանդերձ՝ կարդացած կը լինի Հայոց Պատմութիւնն Հայկէն մինչև մեր օրերն, և կը տեղեկանայ Հայոց վիճակին և պահանջմանց։

Աստ չպիտի փորձեմք հաղորդել «Հայք»ի ընթերցողաց այն վսեմ և հիանալւոյ ոգեյոյզ երևակայութիւնըն զոր հեղինակին նկարագրութիւնն գրգռեց ի մեզ այնպէս որ թուեցաւ մեզ արդարև իղնին կալ Մասեաց վեհ տեսլեանն բազում անգամ. թերևս այն պարագայն թէ և մեք լերանց որդի եմք և լերանց հետ ոգւոյ մասնաւոր համակրութիւն մ'ունիմք, օգնեց մեզ կենդանի և յուզիչ ասափճանաւ երևակայել նկարագրեալ տեսարաններն և զգալ ապաւորութիւններն։

Ուրիշ կարգի հաճոյք մ'ալ կը վայելէ հայ ընթերցողն՝ գրքին մէկ ծայրէն ցմիւսն գտնելով զհեղինակն միշտ համակիր և ողջամիտ զՀայս դատելու մէջ։

Ըստ Շոլէյի(1) Հայեր իրենց վատութեամբ և երկչոտութեամբ, նենգութեամբ և երկլեզուութեամբ արատի պէս կը կենան խորխտ և քաջ ցեղերու մէջտեղ։ Այդ մասին Լըքլէռք կ'ըսէ «Առանց ուզելու ի վեր հանել այդպիսի դատաստանի մի չափազանցութիւնն, կը հարցնեմ ես ինձ թէ Հայոց ուրուած լինիլն մեթէ իրե՞նց վերագրելի է, և թէ արդեօք չիցէ՞ պարտ զայրանալ հարստահարչին դէմ մանաւանդ քան հարստահարելոյն։ Սարկութեան մէջ չկրնար ժողովուրդ մի սովորիլ ինքնավարութեան և ինքնապաշտպանութեան։ Կա՞յ ժողովուրդ մի որ օտարի լծոյն տակ այնքան սերունդներէ ի վեր կքած լինելով՝ կարենար սովրիլ ազատութիւն։ Անկասկած չկայ եւրոպական ազգաց մէջ և ոչ մէկ հատ, որք արհամարանօք զլացան Հայոց իրենք զիրենք վարելու իրաւունքն, որ զօրէր, Հայոց նման, պահպանել անվթար իւր յարումն հայրենի հողոյն և կրօնին՝ հինգ դարեր բռնապետութեան տակ միալէ յետոյ։»

Եւ ի՞նչ կ'արժէ բարբարոս քաջութիւնն առանց կրթութեան։ Քրդաց վերայ կրնա՞յ մարդ սքանչանալ։ Ահաւասիկ թէ մեր հեղինակն որպէս կը դատէ Քրդերն. — «Եթէ Քուրդք ունին անհատական քաջութիւնն զոր Քսենոփոն նշանակած է, այնքան անկարգապահ են որ չեն կրնար յօգուտ գործածուիլ պատերազմի մէջ։ Որպէս կոմս Մոլթքէ դիտած է, նոքա ամենեւին զինուորի յատկութիւններն չունին, և երբ զնոսա զինուորական կարգապահութեան ենթարկես՝ հրացանի կը բռնեն իրենց սպաներն, կը պատռեն իրենց համազգեստն, և բանակն կը լքանեն կերթան։»

Էջմիածնի վանքին նկարագրութիւնն գրքին յոյժ հետաքրքրական մասերէն մէկն է։ Էջմիածինն, կ'ըսէ Լըքլէռք, Հայոց Սուրբ Քաղաքն է, բայց բոլոր սուրբ քաղաքաց քան զամենայն համեստն և գուցէ քան զամենայն աւելի մոռցուածն։ «Երբ հոն հասայ հին ուղեւորաց պատմութեամբք լեցուած գլխովս՝ կարծեցի թէ թարգմանս խաղ մի կը խաղայր ինձ։ Եկած էի տեսնել կրօնական վեհաշուք քաղաքամայր մի, զոր ես ինձ կը ներկայացունէի իբրև Հռովմն Հայոց, և միայն խեղճ գիւղ մի կը գտնէի անապատի մէջ կորսուած։

...Ի՜նչ հակապատկեր կը ներկայացունէ Էջմիածնի ներկայ վիճակ- անցեալ պերճութեան հետ, որուն կը վկայեն աւինալիր նկարագրութիւնք Դավէռնիյէի, Շառտէնի, Դուռնըֆոռի, որք այցելեցին զՀայաստան տասնեօթներորդ դարու վերջին կիսուն մէջ։»

«...Էջմիածնի բոլոր շինուածոց մէջ կաթողիկէ եկեղեցին է որ կրցած է քան զամենայն աւելի խուսափիլ ժամանակին աւերիչ ազդեցութենէն։ Թէպէտ մեր հին գոթական մայր եկեղեցեաց շքեղ և յափշտակիչ երևոյթն չունի, սակայն և այնպէս քրիստոնեայ աշխարհի քան զամենայն հին և հետաքրքրական յիշակերտներէն մին է։ Հիմնեալ ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչի յամի 302՝ հեթանոսական մեհենի մի աւերակաց վերայ, շատ անգամ մասնակի աւերմանց և նորոգմանց ենթարկուած է նա հետևանօք այն անհամար արշաւանաց որոց թատր եղաւ միշտ Հայաստան։...

«Եկեղեցին պատած է արձանագրութեամբք, որոց մէջ Տիւպուա և Պոռէ գտած են յոյն արձանագրութիւններ ես՝ մին քրիստոնէական առաջին դարէն։ Մինչև անդամ զանգակներն, զորս չէնքին ամեն անկիւնն կը գտնես, կը կրեն հետաքրքրական գրեր, և անոնցմէ միոյն վերայ (ոչ ոք գիտէ ուստի եկած է) կը տեսնուին թիպէթեան արձանագրութիւն մի հանդերձ պուտտայական աղօթից բանաձևով։

(1) Տես «Հայք» թիւ 10 Բ. տարի, երես 75)

...Երբ եկեղեցին կը մտնես, կը կարծես թէ հազար տարի ետ կ'երթաս ... Որքան ալ որ փոքր է եկեղեցին, տակաւին մեծ է իր մէջ հաւաքուած դարերովըն, և հոգեկան տպաւորութիւն կը գործէ: Լռութեամբ և խորհրդաւորութեամբ պատկառելի այդ կամարաց ներքև մարդ հնութեան անուշահոտութիւնն կը շնչէ, և դրսի պայծառ լուսոյն յաջորդող այդ կէս-խաւարի աղօտութեան մէջ երևակայութիւնն կ'ուզէ վերակազմել զմեհեանն Անահիտ դիցուհւոյն որոյ արձանն կը բարձրանայր անդանօր ուր կանգնած են այժմ, կեդրոնական գմբէթին տակ, չորս սպիտակ սիւներու վերայ հանգչող սեղանն ու խորանն:

«Գանձատունն կը գտնուի յաւանդատան... Ապակիի տակ շարուած են անդ քահանայապետական ճոխ զարդեր այլ և այլ դարուց, խաչեր, եպիսկոպոսական խոյրեր, ասեղնագործք, մատանիք. արքայական հին թագք ոսկեճամուկք և ականակուռք ա'յնպիսիք որք կրնան երազել տալ նոյն ինքն զՊարոն Ռոչիլտ, որ վերջերս այցելեց այս վանքն: Առանձին ապակիի մի տակ կը գտնուին հնուց իվեր այլ և այլ վեհապետաց կողմանէ կաթողիկոսաց ընծայուած բազմաթիւ նուէրներն:

«Գրատունն, ըստ ռուս ցուցակին որ 1840ին հրատարակուած է, 635 ձեռագիր կը պարունակէ, որոց 462ն հայերէն է և մնացեալք օտար լեզուօք: Ցանմ հետէ հատորոց բաւական մեծ թիւ մի աւելցած է, բայց անհաւանական է թէ 3000 ձեռագիր և 2000 տպեալ հատորներ գտնուին այժմ ի գրատանն, որպէս վանականք կը հաւաստէին ինձ: Գրքերուն շատն երբէք կարգադրուած չեն հաւանականօրէն, և Էջմիածնի կրօնաւորք, հազուագիւտ բացառութեամբք, այնքան քիչ տեղեակ են գրականութեան որ չեն կրնար անոնցմէ օգուտ քաղել: Բարի վանականն որ ինձ կ'ընկերանայր, ցուցուց ինձ գիրք մի որուն համար ըսաւ թէ գրուած էր անընթեռնլի գըրերով. և էր Շահնամէն ի Պարսկաստան ուղևորութիւնըն, Փռանսերէն:

«Էջմիածնի վանականաց զգեստն շնորհալի և ազնուական է. այդ զգեստ աւելի ևս կը պայծառացունէ հայրապետական երևոյթն իրենց դիմաց զոր կը շրջապատեն երկար մօրուք և երկար հերք:...

«Էջմածնի վանուց ալ ընդհանուր երևոյթն թափուր չէ մեծութենէ և վայելչութենէ, բայց եթէ երևակայել ուզէ ոք այն զոր եղած լինելու է հին վանքն իւր անցեալ հարստութեան և պայծառութեան մէջ, պարտի աչքն գոցել և չտեսնել գաւթին խոշոր խոտերն պարտիզին ողբալի վիճակն, անմաքուր բնակարաններն վանականաց, և հնութենէն փլփլող եկեղեցին, վերջապէս լքման և աւերման ընդհանուր երևոյթն:

«Երբ մարդ կը մտածէ թէ այս համբաւաւոր վանքն Հայաստանի հին թագաւորութեան վերջին նշխարն է դեռ կանգուն, կ'ապշի թէ ինչպէս այդպիսի հոգեվարքի յայտնի նշանի մի հակառակ՝ հայ ժողովուրդն այնքան առոյգ և ժիր կը հանդիսանայ իւր քաղաքական ձգտմանց և կրօնական հաւատալեաց մէջ:»

Այդ փլփլող վանքի հովանւոյ տակ կենաց ջուր սկսած է բխել Հայ ազգին համար, ինչպէս որ հեղինակին հետևեալ տողերն կը վկայեն:

«Էջմիածին հայ ուսուցման վառարան մ'է՝ կրօնական կեդրոն մի լինելով հանդերձ: Նորակառոյց մեծ շէնքի մի մէջ, յարեւելից եկեղեցւոյն, կը գտնուի ուսման հաստատութիւն մի որ կը կոչուի «ՃԵՄԱՐԱՆ:» Դա ժիմնազ և սէմինէր միադամայն է, ուր կը կրթուին եկեղեցական և այլ ազատ ասպարէզներու նուիրուելու երիտասարդք: Ուսման ընթացքն ինն տարի կը տևէ հոգևորական լինիլ ուզողներուն համար, մնացելոց համար՝ երկու տարի: Հաստատութիւնն գիշերօթիկ է, և ամեն ինչ կարգադրուած է հանգստաւէտ և ողջապահիկ գործելու համար զայն. սրահք ընդարձակ են, զով և օդասուն. Ննջարանք հովասուն յամարան և տաքուկ ի ձմեռան՝ կը պարունակեն 60 երկաթեայ անկողնակալներ լաւ կահեալ: Ննջարանաց յարակից է լուացարան մի մեծ աղբիւրով ուր ուսանողք կը լուացուին: Ուրիշ սրահ մ'ևս կայ ութ անկողնով, որ կը ծառայէ իբրև հիւանդանոց, հանդերձ դեղարանաւ: Գոլէժն ունի նաև բնագիտական գործիներ, հանքաբանական հաւաքածոյ մի և հնախօսական թանգարան մի որ հետաքրքրական հնութիւններ կը պարունակէ՝ մեծ մասամբ Անւոյ հռչակաւոր աւերակներէն ժողովուած. ի միջի այլոց հայկական սեպաձև արձանագրութիւններ, զորս ոչ ոք կրցած է դեռ կարդալ:

Էջմիածնի Ճեմարանն, ի մի բան, թուեցաւ ինձ ուսուցման տիպար հաստատութիւն մի, զոր առ ոտս Մասեաց գտնելով քիչ չզմայլեցայ: մեծ յառաջդիմութիւն եղած է անդ:

Հայ եպիսկոպոսք հասկցած են թէ ուսում տարածել պէտք է ոչ միայն դասերով այլ և մամլոյ միջոցաւ: Ուստի վանքին մէջ հաստատուած են տպարան մի և տառերու ձուլարան մի ընտիր գործիներով, և կը հրատարակեն ամսօրեայ հանդէս մի հայերէն, զ«Արարատ», կը տպագրեն նաև դասագրեան:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 27 Սեպտ. 92

Իբր շաբաթ մը առաջ Կ. Պոլսոյ հայ ժողովուրդը ուրախութեամբ իմացաւ թէ Ռուսիոյ Ցարը վերջապէս վաւերացուցած էր Խրիմեան Հայրիկի ընտրութիւնն ի գահ կաթողիկոսութեան: Փեթըրսպուրկէ այս լուրն հեռագրուած էր ի Կ. Պոլիս, և մայրաքաղաքիս ռուսական դեսպանատան կողմէ ևս հաղորդուած էր Աչըգեան Պատրիարքին: Սակայն Էջմիածնէ դեռ ո և է հեռագիր հասած չէ ի պատրիարքարան, այնպէս որ Պատրիարքը պարտաւորած է ինք հեռագիր ղրկել յԷջմիածին: Էջմիածնայ կաթողիկոսական Տեղապահին բարեկամ թերթ մը Էջմիածնայ սոյն լռութիւնը բացատրելու համար կ'ըսէ թէ հաւանականաբար Փեթըրսպուրկէ պաշտօնական լուրը հասած չէ դեռ յԷջմիածին, վասն զի այս տեսակ լուրեր թղթատարով և ոչ թէ հեռագրով կը ղրկուին եղեր: Պատրիարքը և Պատրիարքարանի վարչական ժողովք շնորհաւորական նամակներ ղրկած են առ Նորընտիր կաթողիկոսն, և արդէն նախնական պատրաստութիւնք սկսած են աստ կաթողիկոսին և Ռուսաստանէ եկող հրաւիրակաց արժանավայել ընդունելութիւն մը ընելու համար: Ընդունելութեան ծրագիր մը պիտի պատրաստուի ասկէ առաջ նմանօրինակ առիթներով կատարուած արարողութեանց և հանդիսից նկարագրութիւնն աչքէ անցունելով: Բերայի մեծ փողոցին վրայ գտնուած հոյակապ շէնք մը, ուր յառաջագոյն ուրիշ կաթողիկոսներ իջևանած են, պարպուած է և կը պատրաստուի Խրիմեան Հայրիկի բնակութեան համար ցորչափ մայրաքաղաքս մնայ:

Մայրաքաղաքիս Հայ թերթերն արդէն սկսած են անուններն տալ այն անձանց որ հաւանօրէն Ռուսիայէ պիտի գան իբրև հրաւիրակ: Կ'ըսուի թէ Էջմիածնայ Սինոդի անդամ Արիստակէս եպիսկոպոս Սեդրաքեան այդ ժողովոյ հրաւիրակն անուանուած է: Սեդրաքեան սրբազան կաթողիկոսացուն պաշտօնի ընտրելիներէն էր և գըլխաւոր եկեղեցական անդամն էր եկեղեցական բարեկարգութեան ջատագով կուսակցութեան, որոյ նշանաւոր գլուխներէն մին ևս է «Մշակ»լրագրի խմբագիր Գրիգոր Արծրունի: Կ'ըսուի նաև թէ ռուս կառավարութեան կողմէ ևս հրաւիրակ պիտի կարգուի Զօր. Ստեփան Քիշմիշեանց, որ ռուսահայ զինուորականաց մէջ նշանա-

ւոր դիրք կը գրաւէ։ Թերևս հայաշատ Տփղիս քաղաքն ալ իւր կողմէ հրաւիրակ մը կարդէ։

Բնական և հաւանական է որ Սուլթանը և Թուրք կառավարութիւնը չախորժին կաթողիկոսական ընտրութեան սոյն կայսերական վաւերացումէն սակայն իրենց տհաճութիւնը դեռ ոևէ նշանաւոր կերպով յայտնած չեն։ Միայն թէ ինչպէս Մայիսի ընտրութեան ժամանակ, նոյնպէս այժմ լրագրաց թոյլ չարուիր տեսութիւններ և զգացումներ պարունակող յօդուածներ գրել Խրիմեան Հայրիկի վրայ։ Քանի մի համառօտ լուրերու հրատարակութիւնն կը թոյլատրուի, սակայն կարելի չէ ոևէ թերթի մէջ գտնել յօդուած մը որ թուէ նոր կաթողիկոսին բարեմասնութիւնները, ուրախութիւն յայտնէ եղած ընտրութեան և վաւերացման համար, ինդակցի ազգին և կաթողիկոսին և այլն։ Խրիմեան անուան կցուած և անկէ գրեթէ անբաժանելի «Հայրիկ» տիտղոսն ալ գրեթէ արտաքսուած է լրագիրներէ։

Մայրաքաղաքիս մէջ վերջերս պատահած յիշատակելի դէպքերէն մին էր Թուրք կրօնական ուսանողաց (սոֆթա) արտաքսումն Կ. Պոլսէ։ Սեպտ 18ի կիրակի օրը ոստիկանք կը ժողովեն մայրաքաղաքիս բոլոր գաւառացի սոֆթաները որք յատկապէս վարձուած շոգենաւերու մէջ կը դրուին իրենց տեղերը ղրկուելու համար։ Այս սոֆթաները մայրաքաղաքս եկած էին տալու համար աստուածաբանական քննութիւն մի, զոր տալէ ետքը ղերծ պիտի մնային զիւորական ծառայութենէ։ Երկու շաբթի առաւօտ Թուրքերէն լրագրաց մէջ երեւեցաւ պաշտօնական յայտարարութիւն մը յորում կ'ըսուէր թէ այդ ուսանողք իրենց տեղերը կը ղրկուէին որպէս զի զանազան նեղութիւններ չկրէին մայրաքաղաքիս մէջ և թէ այնուհեաև հոն պարտէին անցունել իրենցմէ պահանջեալ քննութիւնները։ Կ'ըսուէր նաև թէ քաղաքին առողջապահական վիճակին բարւոքման համար ևս պէտք էր խաներէ և սրճարաններէ հեռացունել և հայրենիք ղրկել այս պանդուխտ ուսանողները։ Բնական է որ աւելի խորին պատճառներ փնտռենք սոֆթաներու այս արտաքսման ներքև։ Եւ յիրաւի կ'ըսուի ալ թէ ասոնք մեծ դաւ մը նիւթած էին Սուլթանին դէմ։ Կ'ըսուի թէ հաղարաւոր սոֆթաներ միանալով կ'որոշեն Շէյխ Իւլ Իսլամն ստիպել որ եէզիտ հռչակէ զՍուլթան Համիա։ Դա ւին գործադրութենէն առաջ եղելութիւնը կը իմացուի և անմիջապէս բոլոր այդ դաւադիրք շոգենաւերը կը ղրկուին իրենց տեղերը տարուելու համար։ Այս բացատրութիւնն ևս կրնայ բոլորովին ճիշդ չըլլալ, բայց նոյն ատեն դժուար է հաւատ ընծայել լրագրաց մէջ հրատարակուած պաշտօնական յայտարարութեան։

Ոակայն ձգենք Թուրք կրօնաւորները և սպասենք Սուլթանի արտաքսած մէկ ուրիշ հայ կրօնաւորին որ ի մօտոյ փառօք պիտի ժամանէ ի Կ. Պոլիս։

ԱՆԱՆՈՒՆ

Ց. Գ. պիտի ջանամ ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել Խրիմեան Հայրիկի ի Կ. Պոլիս ժամանման, հոս եղած ընդունելութեանց և Նորին Հայրապետութեան աստի մեկնման նկատմամբ։

Նոյն

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ

Սեպտ. 1 1892
Խարբերդ, Խուլլուն

Հիմա Տաճկաստանի դիրքը բոլորովին փոխուածէ, մանաւանդ ինձ համար որ Ամերիկայէն նոր եմ դարձեր։ Այս գիւղը 350 տուներէ կը բաղկանայ, որոյ 15ը Թուրք են և մնացածները բոլորը Հայ են։ Թուէս տասը տարի առաջ Խուլլուի կալուածոց (միւլքին) դրեթէ կէսը Թուրքերուն էր, բայց այժմ ունեցածներնուն մէկ քառորդը հազիւ մնացեր է իրենց, և յուսով եմ ալ թէ մէկ քանէ տարի վերջը բոլորովին պիտի անոթեցունեն, որովհեաև 250 երիտասարդ կայ Ամերիկայ յիշեալ գիւղէն, տարուէ տարի կը գնեն Թուրքերէն, և հիմա Թուրքեր սկսեր են դաղտուկ կողսպուտներ ընել թէ ատ գիւղէն թէ շրջակայ գիւղերէն։

Այս գիւղին մէջ կայ հրէշ Թուրք մը որ Գողիաթին պէս 4 կանգուն մէկ թիզ է. անունը Մուսթաֆայ. աս մարդը լեռնցի Քրդեր բերած է և իր տունը կը պահէ, գիշերները հետը կը պտտցունէ. անցած շաբաթ Հայու տուն մը բացին, Աստուր Եալիեանի, որ գիւղիս հարուստներէն մին է։ Տունը ծակեր էին և բոլոր պըղնձեղէն, արծաթեղէն, հագնելիքներ, մինչև անգամ կոշիկները գողցած էին. անկողնին բոլորտիքի հանդերձներով մէկտեղ։

Ցանկարծակի կէս գիշերուն կ'արթննան. կը պոռան, դրացիներ ժողովելով կը քշեն, բայց աւաղ որ չկրցին մին բռնել։

Աստուր Եալիեան չունի տղայ, միայն դուստի մը։

Այսպիսի դէպքեր շարունակ անպակաս են թէ աս գիւղ թէ շրջակայ գիւղեր. Աստուած ողորմի։

Կ. Գ. Պ.

ԴԱՐՄԱՆՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի՞նչ է դարմանդ, Մայր Հայաստան,
Ելլենք երթա՞նք արտասահման,
Այլ պետութեանց ոտքն խնա՞նք
Թագաւորաց աղերսներ տա՞նք,
Խրկե՞նք նոցա պատուիրակներ,
Ցիշեցնել իրենց խոստմունքներ,
Զի ալ ցաւերուդ վերջ տան.
Այ՞ս է դարմանդ, ո՛ Հայաստան։

Ի՞նչ է դարմանդ, Մայր Հայաստան,
Երթա՞նք Իսթանպոլ առ Սուլթան
Ցայտագիրներ տա՞նք ոսկետառ,
Ելլալ հլու գերիք մինչ ի սպառ,
Փաշաների ճոխ կաչառ տա՞նք,
Քուրդ հրոսակաց մերթ աւար տա՞նք,
Եւ ոչ բողոքոյ մի արդար ձայն.
Այ՞ս է դարմանդ, ո՛ Հայաստան։

Ի՞նչ է դարմանդ Մայր Հայաստան,
Փնտռենք օտարէն ապաստան,
Ձգենք մեր տուն մեր հայրենիք
Կին զաւակունք և բոլոր իք,
Ելլա՞նք օտար երկիր թափառ,
Մոռնա՞նք մեր մայրենի բարբառ,
Պաշտե՞նք օտար աստուած, մատեան.
Այ՞ս է դարմանդ, ո՛ Հայաստան։

Սրբապղծել ծաղրել թոյլ տա՞նք,
Մեր կրօնք, եկեղեցի, սուրբ վանք,
Լռե՞նք երբոր բռնաբանեն
Կամ թէ քանդեն ու կործանեն,
Մեր համեստ հարսունք 'ւ օրիորդներ,
Մեր տուն, խրճիթ, արտ, պարտէզներ,
Հերի՛ք է լացդ տուր պատասխան,
Ի՞նչ դարմանդ, ո՛ Հայաստան։

«Ի բա՛ց, ի բա՛ց, մէկդի, ի բա՛ց,»
Մայր Հայաստան խստիւ պոռաց—
«Սուլթան մուլթան և աս կամ ան
Չեն ինձ սփոփանք, չեն ինձ դարման,
Կուգէ՞ք ելլալ քաջ մարդոց պէս,
Մարտադաշտից, զոհ, ողջակէզ,
Վասն հին ցաւոցս դեղ ու դարման,
Արի՛ւնդ է որդեակս, իմ ընչեթան։»

Պրուքլին Սեպտ. 30 1892 Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՅՅԼ ԵՒ ՅՅԼՔ

ԲԱՂԱԲԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՆԱՀԱՆ ԼՈՒՐԵՐ

—Սեպտ. 26ին Կ. Պոլսէն Թանին ուղղեալ հեռագիր մի կ'ըսէ։ «Սուլթանն որոշած է խառն Յանձնախումբ մի յղել որ Հայաստան պտտի, ժողովրդեան ցաւերն իմանայ և գործադրելի բարեկարգութիւններն նշանակէ։ Բ. Դուռն նոր հայ կաթողիկոսին կողմանէ հաւանական յուզում մի կը վախէ թէ կը լինի, և կը բաղձայ այս միջոցով առջեւն առնուլ Կլատսթընեան դահլճի կարելի դիտողութեանց։ Այսպէսով պիտի կրնայ Դուռն, յետ քննութեանց, տալ Հայոց գոհացում մի փոքր ի շատէ իրական՝ յառաջ քան զԲրիտանական Խորհրդարանի բացումն։

—Յունաստան վէճ ունի Ռումանիոյ հետ։ Ռումանական կառավարութիւնն գրաւած է ահագին հարստութիւնն յոյն վաճառական Զափասի, որ կտակած էր զայն յօգուտ տնտեսութեան և ճարտարարուեստութեան Յունաստանի։ Ռումանիա կը պնդէ թէ օտարականք չեն կրնար, ըստ տրամադրութեան ռումանական օրինաց, իրենց հաստատուն կալուածքն՝ ինչ տեսակէ որ լինի՝ կտակել։ Իսկ Յունաստան կը պնդէ թէ կտակն եղած է այն ատեն երբ Ռումանիա մասն կը կազմէր Թուրքիոյ, և թէ յիշեալ օրէնքն յայնժամ գոյութիւն չունէր։

—Յունաստան իւր բողոքն կրկնած է երկրորդ ծանուցագրով մ'առ մեծ պետութիւնս ընդդէմ պուլկար կառավարութեան, որ Արեւելեան Ռումելիի մէջ բազմաթիւ յոյն դպրոցներ փակած է և յունարէն լեզուի ուսման տեղ պաշտօնապէս հաստատած է զպուլկարականին։

—Դուռն ռուսական մեղադրող ծանուցագրի մի պատասխանելով կը հռչակէ իւր խորին յարգանքն նկատմամբ Պէռլինեան Դաշնագրոյն որ խարիսխն է ներկայ քաղաքական կարգին։ Կը վստահեցուներ նաև թէ Պէռլինեան Դաշնագիրն եղծանել չէ ուզած, և ոչ Ռուսիոյ դիւրազգայնութիւններն վիրաւորել։ Միանգամայն հրաման յղած է Սոֆիայի թրքական գործակատար Բէշիր Պէյին որպէս զի սա ծանր դիտողութիւններ ներկայացուներ պուլկար կառավարութեան՝ վերաբերութեամբ այն անճիշդ տեղեկութեան զոր Սվոպոտա թերթն տրուած էր Սթամպուլոֆի ընդունելութեան մասին Սուլթանին քով։

—Բեամիլ Փաշան, կառավարիչ Պէյրութի, ըստ հաճոյս իւր կոխակայած է կառուցումն այն շէնքին որ ճիզուիթներուն գոլէժին յաւելուած պիտի լինէր։

—Արեւելագիտաց Համաժողովին որ տեղի ունեցաւ ի Լոնտոն, Փրոֆ. Զերաղ ՀԱՅԱՍՏԱՆԻ ներկայացուցիչ անուանուած է քուէարկութեամբ։ Գալ գումարումն պիտի լինի ի Ժընէվ, ուր 16 Հայ ուսանողներ ունիմք այժմ։ Այս առաջին անգամն է որ անկախ երկիրներու շարքին մէջ Հայաստանն ալ կը դաստրի տեսականօրէն և ներկայացուցիչ կ'ունենայ։

—Հունգարիոյ Ազգային Ժողովոյ մէջ ութ հայազգի երեսփոխաններ կան, ի միջի որոց Տիար Պէլա Լուքաս, նախարար Առևտրական Գործոց Հունգարիոյ։

—«Մշակ» ռուս լրագրէ մի կը տեղեկանայ թէ «Բագուի մէջ այս օրերս ոսոիկանութեանը յայտնվեց, որ բագուաբնակ երկու Պարսիկներ բռնի կերպով մահմետականացրին մի հայ երախային, 10 տարեկան Սարգիս Ասրեանցին։»

—Փր. Խալաթեան «Մշակի մէջ հրատարակած է ողբացեալ Բամառ-Բաթիպայի գրականական կտակը.

«Կեանքիս մէջ մի հատ սին փառք ունեցայ,
Սուրբ Էջմիածնում թաղվել ցանկացայ.
Սիրական իմ աղգ, թէ Աստուած սիրես՝
Այս իմ մի հատիկ իղձըս կատարես։»

—«Արձագանք» կ'ըսէ թէ Էջմիածնի Ճեմարանի աշակերտաց թիւն հասել է 150ի. քան զոր աւելին չկրնար ընդունիլ։

Նոյն թերթէն կը տեղեկանամք թէ Պ. Փ. Տէր-Մովսէսեան, որ իւր ուսման ընթացք աւարտած է Դորպատի համալսարանում, հրաւիրուած է Ս. Էջմիածնի Ճեմարանի ուսուցիչ, ուր պիտի աւանդէ հայոց աղգային և մատենագրական պատմութիւն։

Վերջերս Էջմիածին ուղեւորած է նաև Շուշեցի Պ. Ա. Մելիքեան, որ Եէնայի համալսարանէն փիլիսոփայութեան և աստուածաբանութեան տոքթորի աստիճան ստացած է, Գեւորգեան Ճեմարանի մէջ աստուածաբանութեան ուսուցչի պաշտօն ստանձնելու։

—Հարթֆըրտէն կը տեղեկացուներն թէ Մալաթիացի երիտասարդ մի զինուց գործանոցին մէջ մեծ համարում վայելած է գաւազան մի շինած լինելով որ գաղտ զբոսպականաց միջոցաւ կը վերածուի հրացանի» Դժբաղդաբար երիտասարդն օղի խմելու սովորութեան գերի եղած լինելով ստիպուած է յառաջդիմութեան և հարստութեան այս պատեհութիւն լքանել և վերադառնալ ի Տաճկաստան։

—Թղթակից մի կը գրէ մեզ թէ այժմ Շիքակոյի մէջ կան ութ հայ ուսանողներ, որոց չորսն բժշկութիւն կ'ուսանին, երեքն՝ աստուածաբանութիւն և մէկն քաղաքական Տնտեսագիտութիւն։

—Պոսթընէն կը գրէ մեզ Տի. Մ. Տ. Գ. թէ այնտեղ Խարբերդու գաւառէն եկած մի քանի Հայեր փոխանակ գործելու, դատարկաշրջիկ կը պտտին և ասուան խաբելով ապրուստ կը հոգան. մին գողցած է Հայու մի 100 թալէռն բարձին տակէն։ Պէտք է որ մեր Հայրենակիցներ իրենց քրտանց պտուղն ապահով դրամատանց մէջ պահեն և դրամ փոխ չտան ծոյլ և վատ շրջողներուն։

—Ատանայէն 19 Հայեր, 18—24 տարեկան, հոս Նիւ Եորքի նաւահանգիստն հասած են Հոկտ. ամսոյն 8ին, և այժմ յետս ղրկուելու վճիռ ընդունած լինելով կը հնարին փոխել տալ վճիռն։ Պոսթընի մօտերն գործանոցի մի մէջ գործելու տեսակ մի խոստում առած են եղեր իրենց արդէն նոյն գործանոցին մէջ աշխատող հայրենակցաց ջանիւք. թէ խոստումն որքան արժէք ունի, այն յայտնի չէ, բայց ինչ որ յայտնի է, այն է թէ կառավարութիւնն իբրև կանոնաւոր դաշնագրութեամբ այս երկիրն եկած կը համարի այս Հայեր, որ պարզապէս երկրին օրէնքին հակառակ է, և վճռած է, նոցա պարզամիտ և հաւանական է չափազանցեալ պատմութեան համաձայն, գիրենք ետ յղել։

«L'ARMENIE–ARMENA» Ֆրանսերէն և Անգղիերէն թերթ քաղաքական և գրական, կը հրատարակուի ամիսն մի անգամ։ տարեկան բաժնեգինն է 3 թալէռ 75 սենթ հասցէն է.—

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

«ARA» ամսաթերթ անգղիերէն, Հայ-քաղաքական և գրական։ Տարեկան բաժնեգինն է երկու ռուփի։ Հասցէն է.—

11 WELLESLEY ST., CALCUTA, INDIA

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան: բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ր.

— «ՀԱՅՔ»ի 1891 տարին ամբողջ կազմուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի:

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳՐՔԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ԿԱԶՄ ԸՆՏԻՐ

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոև է արական հանդերձեղէնի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան:

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way 46 և 47դ Փողոցներուն միջև Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանքաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of illustration in line & half-tone.

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

N. DESCHAMPS

Ն. ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութըն դիմացկուն և աժան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին: Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ: Փորձէ և պիտի համոզուիս:

MARK F. COSGROVE

ԿՕՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ՐԸՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corner Bigelow Court

WORCESTER MASS.

Այս է ամենէն այէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կօշիկի րըպպըրներ: Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն:

REGULATE THE

STOMACH, LIVER AND BOWELS,

AND

PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.

10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՂԱԳՈՐԾ

(հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ